**Տեղական ինքնակառավարման մարմինների 2021 թվականի հոկտեմբերի 17-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների**

# ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետը (ներառյալ) | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 1 | Դիտորդներ հավատարմագրելու կամ հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարելու համար դիմումները Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.<br>***ընտրություն նշանակելու օրվանից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 15 օր առաջ*** | 31, մաս 2 | **19.08.2021-ից մինչև** 2.10.2021 | Միջազգային կազմակերպություններ, օտարերկրյա հասարակական կազմակերպություններ, Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպություններ |
| 2 | Քվեարկության օրը ընտրությունների և քվեարկության վերաբերյալ լուսաբանում իրականացնելու համար հավատարմագրվելու դիմումը և զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչների ցուցակը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.<br>***ընտրություն նշանակելու օրվանից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 15 օր առաջ*** | 31, մաս 8 | **19.08.2021-ից մինչև** 2.10.2021 | Լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձ |
| 3 | Ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանք՝ ըստ համայնքների, Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվում է.<br>***ընտրություն նշանակելու օրվանից հետո, ոչ ուշ, քան 3 օր հետո*** | 12, մաս 2 | **մինչև 22.08.2021** | Լիազոր մարմին |
| 4 | 70 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում՝ հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը հրապարակվում է.<br>***ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 5 օր հետո*** | 20, մաս 5 | **մինչև 24.08.2021** | ՀՌՀ |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետը (ներառյալ) | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 5 | Նախընտրական քարոզչություն իրականացնելու համար կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին եթերաժամ տրամադրող հեռուստառադիոհեռարձակում իրականացնող մասնավոր հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից իրենց վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքն՝ իրենց եթերով հրապարակվում է.<br>***ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 5 օր հետո*** | 20, մաս 6 | **մինչև 24.08.2021** | Մասնավոր հեռուստա-ընկերություններ և ռադիոընկերություններ |
| 6 | 70 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հեռուստառադիոհեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը հրապարակվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 7 օր հետո*** | 20, մաս 11 | **մինչև 26.08.2021** | ՀՌՀ |
| 7 | Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին տրամադրվող՝ 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով վահանակների, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում, հասարակական տրանսպորտի կանգառներում և վերելակներում տեղակայված վահանակների քանակի, մակերեսների, դրանց գտնվելու վայրերի և վարձավճարների վերաբերյալ տեղեկատվությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***ընտրությունները նշանակվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում*** | 21, մաս 6 | **մինչև 29.08.2021** | Արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպություններ կամ մարմիններ |
| 8 | Ընտրական տեղամասերը կազմավորվում են.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ*** | 16, մաս 1 | **մինչև 2.09.2021** | Լիազոր մարմին մասնակցությամբ համայնքի ղեկավարի և տարածքային ընտրական հանձնաժողովի անդամի |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետը (ներառյալ) | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 9 | Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները գրանցման համար փաստաթղթերը համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնում են.<br>***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 45, և ոչ ուշ, քան 35 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն*** | 127, մաս 4 | 2.09.2021 - 12.09.2021<br>**մինչև ժամը 18:00** | Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ |
| 10 | Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով գովազդային վահանակներում, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում, հասարակական տրանսպորտի կանգառներում և վերելակներում տեղակայված վահանակներում քարոզչական պաստառներ տեղադրելու համար հայտերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են.<br>***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 45, և ոչ ուշ, քան 35 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն*** | 21, մաս 6<br>127, մաս 4 | 2.09.2021 - 12.09.2021<br>**մինչև ժամը 18:00** | Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ |
| 11 | Համայնքի ղեկավարը սահմանում է տեղամասային կենտրոնները, կազմում է տեղամասային կենտրոնների ցանկը՝ նշելով տեղամասային կենտրոնների գտնվելու վայրը, ինչպես նաև տեղամասային կենտրոնների և քվեարկության սենյակների բնութագրերը և ներկայացնում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հաստատմանը.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 43 օր առաջ*** | 18, մաս 1, 2.1 | **մինչև 4.09.2021** | Համայնքի ղեկավար |
| 12 | Ընտրական տեղամասերի հերթական համարները սահմանվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.<br>***սահմանվելուց հետո երկօրյա ժամկետում*** | 52, մաս 1, կետ 3 | **մինչև 6.09.2021** | Տարածքային ընտրական հանձնաժողով |
| 13 | Ընտրողների ցուցակը տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին տրամադրվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ*** | 12, մաս 1 | **մինչև 7.09.2021** | Լիազոր մարմին |
| 14 | Ընտրողների ցուցակը տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է.<br>***քվեարկության օրվանից 40 օր առաջ*** | 13, մաս 3 | **7.09.2021-ին** | Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետը (ներառյալ) | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 15 | Ընտրողների նախնական ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի, ներբեռնելու հնարավորությամբ համացանցում՝ www.police.am հասցեով տեղադրվում է.<br>***քվեարկության օրվանից 40 օր առաջ*** | 13, մաս 2 | **7.09.2021-ին** | Լիազոր մարմին |
| 16 | Կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճների և այլ շինությունների ցանկը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում տեղադրվում է.<br>***ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 20 օր հետո*** | 19, մաս 3<br>ԿԸՀՈ 17.06.16թ.<br>N 22-Ն | **մինչև 8.09.2021** | Մարզպետներ |
| 17 | Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների գրանցումը կատարվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 35, և ոչ ուշ, քան 30 օր առաջ*** | 127, մաս 5 | 12.09.2021 - 17.09.2021 | Տարածքային ընտրական հանձնաժողով |
| 18 | Քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղեր առանձնացնելու մասին որոշում ընդունվում է.<br>***նախընտրական քարոզչությունն սկսելուց 10 օր առաջ*** | 21, մաս 3 | **մինչև 12.09.2021** | Համայնքի ղեկավար |
| 19 | 10 000 և ավելի ընտրող ունեցող համայնքի դեպքում՝ քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղեր առանձնացնելու մասին համայնքի ղեկավարի որոշումը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***որոշումն ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում*** | 21, մաս 4 | **մինչև 15.09.2021** | Համայնքի ղեկավար |
| 20 | Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների բաշխումը՝ ըստ ընտրական տեղամասերի կատարվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 30 օր առաջ*** | 44, մաս 5 | **մինչև 17.09.2021** | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 21 | Տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամներ նշանակելու մասին հայտերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.<br>***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն*** | 44, մաս 6 | 17.09.2021 - **22.09.2021 մինչև ժամը 18:00** | Աժ խմբակցություն ունեցող կուսակցու-թյուններ (կուսակցու-թյունների դաշինքներ), Տարածքային ընտրական հանձնաժողով |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետը (ներառյալ) | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 22 | Մարզկենտրոնների ավագանիների ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին հանրային ռադիոյից և հանրային հեռուստատեսությունից անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը սահմանվում է.<br>***ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ հաջորդ օրը*** | 20, մաս 2<br>138, մաս 1 | **18.09.2021-ին** | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 23 | Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում հրապարակվում են.<br>***ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետն ավարտվելուց հետո՝ եռօրյա ժամկետում*** | 131, մաս 2 | **մինչև 20.09.2021** | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 24 | Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ տեղեկանք Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացվում է.<br>***գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ երեք աշխատանքային օրը մեկ*** | 26, մաս 7 | **20.09.2021 -ից սկսած երեք աշխատանքային օրը մեկ** | Առևտրային բանկեր |
| 25 | Կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածուներն իրենց գույքի և եկամուտների մասին հայտարարագիր համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնում են.<br>***գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 5 օրվա ընթացքում*** | 8, մաս 5 | **մինչև 22.09.2021** | Թեկնածուներ |
| 26 | Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունները կուսակցության գույքի և եկամուտների մասին հայտարարագիր Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են.<br>***գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 5 օրվա ընթացքում*** | 8, մաս 5 | **մինչև 22.09.2021** | Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետը (ներառյալ) | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 27 | Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները Երևանում և հանրապետության բոլոր մարզերում մասնաճյուղ ունեցող որևէ առևտրային բանկում նախընտրական հիմնադրամ **պարտավոր են բացել**.<br>***ընտրական ցուցակը գրանցելու վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո՝ 5 օրվա ընթացքում*** | 26, մաս 1 | **մինչև 22.09.2021, որը վերջնաժամկետն է** | Կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ |
| 28 | Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է.<br>***ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 5-րդ օրը, ավարտվում՝ քվեարկության օրվանից 1 օր առաջ*** | 19, մաս 1 | 22.09.2021 - **15.10.2021 մինչև ժամը** 24:00 | Ընտրողներ, թեկնածուներ, կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ |
| 29 | Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից իրենց նախընտրական ծրագրերը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած էլեկտրոնային ձևով ներկայացվելու դեպքում ԿԸՀ համացանցային կայքում տեղադրվում են.<br>***ներկայացվելուց հետո մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, բայց ոչ շուտ, քան նախընտրական քարոզարշավի պաշտոնական մեկնարկը*** | 8, մաս 4 | **22.09.2021-ից ներկայացվելուց հետո մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը** | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 30 | Կուսակցությունների գույքի և եկամուտների մասին հայտարարագրերը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում են.<br>***հայտարարագիրը ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում*** | 8, մաս 6 | **մինչև 25.09.2021** | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 31 | Տեղամասային ընտրական հանձնաժողովի առաջին նիստը տեղամասային կենտրոնում հրավիրվում է.<br>***կազմավորման օրվանից հետո՝ 3-րդ օրը, ժամը 12.00-ին*** | 44, մաս 7 | **25.09.2021-ին ժամը 12:00-ին** | Տեղամասային ընտրական հանձնաժողով |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետը (ներառյալ) | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 32 | 70 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ՝ հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հեռուստառադիոհեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ ՀՌՀ-ի մշտադիտարկման արդյունքները, եզրակացությունը հրապարակվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են՝<br>***ոչ ուշ, քան նախընտրական քարոզչության համար սահմանված ժամկետի 10-րդ օրը*** | 20, մաս 12 | **մինչև 1.10.2021** | ՀՌՀ |
| 33 | Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են.<br>***նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո 10-րդ օրը*** | 28, մաս 1 | **1.10.2021-ին** | Կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ |
| 34 | Նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում են.<br>***հայտարարագրերը ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում.*** | 28, մաս 4 | **մինչև 4.10.2021-ը, 14.10.2021-ը և** 24.10.2021 | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 35 | Թեկնածուները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները կամ դաշինքի անդամ կուսակցություններն ինքնաբացարկի մասին դիմում կարող են ներկայացնել.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն*** | 137, մաս 2 | **մինչև 7.10.2021 մինչև ժամը 18:00-ն** | Թեկնածուներ, կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ |
| 36 | Ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացնելու մասին դիմում լիազոր մարմին ներկայացվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ*** | 14, մաս 1 | **մինչև 7.10.2021** | Ընտրողներ, Լիազոր մարմին |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետը (ներառյալ) | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 37 | Քվեաթերթիկների տպագրման համար ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանք՝ ըստ ընտրական տեղամասերի և համայնքների համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովին տրամադրվում է.<br>***քվեարկության օրվանից առաջ 10-րդ օրը*** | 12, մաս 2<br>59, մաս 5 | **7.10.2021-ին** | Լիազոր մարմին |
| 38 | Քվեաթերթիկների նմուշների սահմանվում են.<br>***քվեարկության օրվանից առաջ 10-րդ օրը*** | 52, մաս 1, կետ 2<br>59, մաս 1<br>140 | **7.10.2021-ին** | Տարածքային ընտրական հանձնաժողով |
| 39 | Քվեաթերթիկները տպագրվում են.<br>***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 10, և ոչ ուշ, քան 3 օր առաջ*** | 59, մաս 4, 5 | 7.10.2021 - 14.10.2021 | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 40 | Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքներով վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությունը կազմվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***հայտարարագրերը ստանալուց հետո՝ 7 օրվա ընթացքում*** | 29, մաս 5 | **մինչև 8.10.2021-ը** | Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն |
| 41 | Տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորման մեջ ներբերնվող՝ էլեկտրոնային եղանակով կազմված ընտրողների ցուցակները Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 8 օր առաջ*** | 12, մաս 2 | **մինչև 9.10.2021** | Լիազոր մարմին |
| 42 | Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, քարտուղարը կամ հանձնաժողովի անդամը այդ պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին կարող է ներկայացնել.<br>***մինչև քվեարկության օրվան նախորդող 5-րդ օրվա ժամը 18.00-ն*** | 45, մաս 6<br>կետ 3 | **մինչև 12.10.2021<br>մինչև ժամը 18:00-ն** | Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ, քարտուղար, հանձնաժողովի անդամ |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետը (ներառյալ) | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 43 | Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները՝ յուրաքանչյուր ընտրական տեղամասին մեկ կնիք հաշվարկով և տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների անհատական կնիքները տարածքային ընտրական հանձնաժողովին հանձնվում են.<br>***քվեարկությունից ոչ շուտ, քան 5, և ոչ ուշ, քան 3 օր առաջ*** | 60, մաս 4 | 12.10.2021 - 14.10.2021 | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 44 | Ընտրողը քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակում իրեն ընդգրկելու մասին դիմում՝ լիազոր մարմին, իրավունք ունի ներկայացնել.<br>***քվեարկության օրվան նախորդող 5 օրվա ընթացքում, ինչպես նաև քվեարկության օրը՝ մինչև քվեարկության ավարտը*** | 14, մաս 2 | **12.10.2021-ից մինչև 17.10.2021-ը, մինչև** 20.00 | Ընտրողներ, Լիազոր մարմին |
| 45 | Ընտրողներին քվեարկության օրվա, ընտրական տեղամասի համարի, տեղամասային կենտրոնի հասցեի և ժամանակի մասին ծանուցագիր ուղարկվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 4 օր առաջ*** | 13, մաս 6 | **մինչև 13.10.2021** | Լիազոր մարմին |
| 46 | 70 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ՝ հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հեռուստառադիոհեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ ՀՌՀ-ի մշտադիտարկման արդյունքները, եզրակացությունը հրապարակվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են ՝<br>***ոչ ուշ, քան նախընտրական քարոզչության համար սահմանված ժամկետի 20-րդ օրը*** | 20, մաս 12 | **մինչև 11.10.2021** | ՀՌՀ |
| 47 | Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը Կնտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են.<br>***նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո 20-րդ օրը*** | 28, մաս 1 | **11.10.2021-ին** | Կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետը (ներառյալ) | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 48 | Ընտրողների վերջնական ցուցակները՝ ըստ ընտրական տեղամասերի, ներբեռնելու հնարավորությամբ համացանցում՝ www.police.am հասցեով տեղադրվում են.<br>***քվեարկության օրվանից 7 օր առաջ*** | 13, մաս 2 | **10.10.2021-ին** | Լիազոր մարմին |
| 49 | Տեղամասային կենտրոնում փակցվող և տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից գործածվող ընտրողների ցուցակները՝ կազմված մատյանի ձևով՝ ըստ ընտրական տեղամասերի, և ընտրական տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները, ինչպես նաև քվեարկության օրն ընտրական տեղամասում ընտրողների լրացուցիչ ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին տրամադրվում են.<br>***քվեարկության օրվանից 3 օր առաջ*** | 12, մաս 3 | **14.10.2021-ին** | Լիազոր մարմին |
| 50 | Ընտրողների ցուցակի օրինակը տեղամասային կենտրոնում բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է.<br>***քվեարկության օրվանից 2 օր առաջ*** | 13, մաս 4 | **15.10.2021-ին** | Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ |
| 51 | Քվեարկության սենյակի կահավորումն ավարտվում է.<br>***քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն*** | 57, մաս 3 | **16.10.2021-ին մինչև ժամը 24:00** | Համայնքի ղեկավար, տեղամասային ընտրական հանձնաժողով |
| 52 | Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին քվեաթերթիկները, քվեարկության ծրարները, ինքնասոսնձվող դրոշմանիշերը, հանձնաժողովի կնիքը, հանձնաժողովի անդամների անհատական կնիքները, տեխնիկական սարքավորումները հանձնվում են.<br>***քվեարկության նախորդ օրը*** | 59, մաս 6<br>60, մաս 5, 7 | **16.10.2021-ին** | Տարածքային ընտրական հանձնաժողով |
| 53 | Նախընտրական հիմնադրամների հաշիվների հետ կապված բոլոր գործառնությունները դադարեցվում են քվեարկության օրվանից | 27, մաս 7 | **17.10.2021-ից** | Առևտրային բանկեր |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետը (ներառյալ) | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 54 | Քվեարկության օրը տեղամասային կենտրոնում տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստն սկսվում է.<br>***քվեարկության օրը՝ ժամը 07:00-ին*** | 64, մաս 1 | **17.10.2021-ին ժամը 07.00-ին** | Տեղամասային ընտրական հանձնաժողով |
| 55 | Քվեարկությունը սկսվում է<br>***Քվեարկության օրը ժամը՝ 08:00-ից*** | 56, մաս 1<br>65, մաս 1 | **17.10.2021-ին ժամը 08.00-ից** | Տեղամասային ընտրական հանձնաժողով |
| 56 | Քվեարկությունն ավարտվում է.<br>***Քվեարկության օրը ժամը՝ 20:00-ին*** | 56, մաս 1<br>68, մաս 1 | **17.10.2021-ին ժամը 20:00-ին** | Տեղամասային ընտրական հանձնաժողով |
| 57 | Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության կազմումն ավարտվում և արձանագրությունը հրապարակվում է.<br>***ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 12 ժամ հետո*** | 71, մաս 5 | **18.10.2021 մինչև ժամը 08:00** | Տեղամասային ընտրական հանձնաժողով |
| 58 | Ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը, ընտրողների ցուցակների փաթեթը, չօգտագործված քվեարկության ծրարների փաթեթը, չօգտագործված քվեաթերթիկները, քվեարկության արդյունքների արձանագրության 2 օրինակը, արձանագրության մեկ քաղվածք, գրանցամատյանը, հանձնաժողովի կնիքը, տեխնիկական սարքավորումը տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են.<br>***ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 14 ժամվա ընթացքում*** | 71, մաս 9 | **18.10.2021 մինչև ժամը 10:00** | Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ և քարտուղար |
| 59 | Համայնքում ընտրությունների քվեարկության նախնական արդյունքներն ամփոփվում և արձանագրությամբ վավերացվում են.***քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում*** | 74, մաս 1 | **18.10.2021 մինչև ժամը 14:00** | Տարածքային ընտրական հանձնաժողով |
| 60 | Ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունների տվյալների մուտքագրումը համակարգիչ ավարտվում է.<br>***քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 20 ժամվա ընթացքում*** | 73, մաս 2 | **18.10.2021 մինչև ժամը 16:00** | Տարածքային ընտրական հանձնաժողով |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետը (ներառյալ) | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 61 | Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմում համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել. ***քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն*** | 48, մաս 12, 14 | **18.10.2021 -ին ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00 կամ 19.10.2021 -ին ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն** | Կուսակցություն, կուսակցությունների դաշինք, ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածու, վստահված անձ համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ |
| 62 | Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումն իրավասու անձը համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնում է. ***քվեարկության հաջորդ օրը ժամը 12.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո 3 օրը՝ ժամը 11.00-ն*** | 48, մաս 16 | **18.10.2021-ին ժամը 12.00-ից մինչև 20.10.2021 -ը՝ ժամը 11.00-ն** | Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ, վստահված անձ, համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ, քվեարկությանը չմասնակցած ընտրող |
| 63 | Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումներն ընդունվում են ***քվեարկության հաջորդ օրը ժամը 12.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո երրորդ օրը՝ ժամը 11.00-ն*** | 48, մաս 16 | **18.10.2021-ին ժամը 12.00-ից մինչև 20.10.2021 -ը՝ ժամը 11.00-ն** | Տարածքային ընտրական հանձնաժողով |
| 64 | Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել. ***քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո 2 օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն*** | 50, մաս 1 | **18.10.2021 -ին ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00 կամ 19.10.2021 -ին ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն** | Ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածու, վստահված անձ, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետը (ներառյալ) | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 65 | Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմումներն ընդունվում են.<br>***քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն*** | 50, մաս 1 | **18.10.2021 -ին ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00 կամ 19.10.2021 -ին ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն** | Տարածքային ընտրական հանձնաժողով |
| 66 | Տարածքային ընտրական հանձնաժողովներում վերահաշվարկի աշխատանքներն սկսվում են.<br>***վերահաշվարկի դիմումների ընդունման համար սահմանված վերջնաժամկետի օրը՝ ժամը 14.00-ից, և դադարեցվում են քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը՝ ժամը 14.00-ին*** | 50, մաս 6 | **19.10.2021 ժամը 14:00-ից - 22.10.2021 մինչև ժամը 14:00** | Տարածքային ընտրական հանձնաժողով |
| 67 | Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքներով վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությունը կազմվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***հայտարարագրերը ստանալուց հետո՝ 7 օրվա ընթացքում*** | 29, մաս 5 | **մինչև 18.10.2021** | Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն |
| 68 | Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.<br>***քվեարկության ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում*** | 60, մաս 6 | **մինչև 20.10.2021** | Տարածքային ընտրական հանձնաժողով |
| 69 | Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են.<br>***ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ*** | 28, մաս 1 | **մինչև 21.10.2021** | Կուսակցություն, Կուսակցությունների դաշինք |

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված | Կատարման ժամկետը (ներառյալ) | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 70 | Համայնքում ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում՝ ընտրությունների արդյունքներն ամփոփող համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել.<br>***ընտրության արդյունքներն ամփոփելու համար սահմանված ժամկետից առնվազն 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն*** | 48, մաս 13, 15 | **22.10.2021 մինչև ժամը 18.00-ն** | Կուսակցություն, կուսակցությունների դաշինք |
| 71 | 70 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ՝ հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հեռուստառադիոհեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ ՀՌՀ-ի մշտադիտարկման արդյունքները, եզրակացությունը հրապարակվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են ՝<br>***ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ*** | 20, մաս 12 | **22.10.2021-ին** | ՀՌՀ |
| 72 | Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքներով վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությունը կազմվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***հայտարարագրերը ստանալուց հետո՝ 7 օրվա ընթացքում*** | 29, մաս 5 | **մինչև 23.10.2021** | Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն |
| 73 | Համայնքում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կազմվում է.<br>***քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը*** | 74, մաս 2 | **24.10.2021-ին** | Տարածքային ընտրական հանձնաժողով |
| 74 | Համայնքում քվեարկության արդյունքներն ամփոփվում և ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումն ընդունվում է.<br>***քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը*** | 74, մաս 6<br>141, մաս 2 | **24.10.2021-ին** | Տարածքային ընտրական հանձնաժողով |